Հովհան Քաջունի

Սիրտը գերեզմանում

Թիֆլիս - 1919

891.99
Ք-28

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐԻԱԾ

ՊՕԷՄ

891.99
Չ- 28

ԹԻՖԼԻՍ — ՌՉԺԹ — ԱՊՐԻԼ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Ամբոխները խելագարված

ՊՕԷՄ

ԹԻՖԼԻՍ—ՌՉԺԹ ԱՊՐԻԼ

16.07.2013
48067
3932-55

ԱՄԲՈԽՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐԻԱԾ

1

Հեռու, մօտիկ ընկերներին,—աշխարհներին, արևներին,—
հրանման հոգիներին։—
Բոլոր նրանց, ում որ հոգին վառուում է վառ,—
Բոլոր նրանց հոգիներին արևավառ։—
Կեանքի, ահի այս ամեհի աղջամուղջում՝
ողջակիզող հոգիներին—ողջոյն, ողջոյն...

2.

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն։
Արևը, բորբ, մայր էր մանում արևամուտքում։
Դաշտի վրայ փռել էր մուժ արիւնամած՝
Թոյն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած։
Արևը, թէժ, մայր էր մանում արևմուտքում—
ու արիւն էր դաշտի վրայ, թոյն էր թքում։
Հորիզոնում վառել էր մի կարմիր քուրա—
ու արնավառ փայլ էր սփռում դաշտի վրայ։
Ու արտերը, ալեծածան, վառել էին
արեգակի կարմիր փայլով իրիկնային։—
Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝
հրակարմիր տաքածել էր նրանց առաջ։—
Ծով էր կարծես, որ սկիզբ ու սահման չունի—
ծով էր կարծես՝ մշուշի մէջ իրիկունի...

3.

Արևի տակ իրիկնային, իրիկնային տենդով վառուած՝
այդ հին դաշտում կուում էին ամբոխները խելագարուած։
Քաղաքներից ու գիւղերից, սոէպներից հեռու ու մօտ՝
եկել էին նրանք նորից՝ յուսավառուած ու կրակոտ...
Ով քաղաքից էր հեռացել—նա թողել էր մշուշը ծեր,—
մշուշը, որ կեանքի վրայ մխաշաղախ ամպ էր դարձել։
Ով եկել էր գիւղից հեռու—նա թողել էր հողը խոնաւ,
որի վրայ կեանքը հլու ոչ մի ոսկի հասկ չը ծնաւ։
Ով եկել էր սոէպներից, նա թողել էր անծայրածիր
լայնութիւնը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել։
Ով քաղաքից էր հեռաւոր, ուր մառախուղ էր անորոշ—
նա բերել էր թոքախտաւոր սիրտը, որպէս կարմիր դրօշ։—
Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մութը գիւղի՝
բերել էր իր մկաններում բնդմնաւորուած ուժը հողի։
Ով եկել էր սոէպներից, ուր ապրում էր որպէս գերի—
բերել էր իր լուրթ աչքերում լայնութիւնը սոէպների...
Ամբոխացած, խելագարուած, չը տանելով հին կեանքը էլ՝
անծիր դաշտում այս հաւաքուած նրանք կուի էին ելել...

4.

Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թէժ լոյսով վառուած։—
Ու երգելով կուում էին ամբոխները խելագարուած։—
Դաշտն իր դէմը՝ փռուած էր նա՝ շառագունուած ու արևուն,—
ու հեռուում, ճամբի վրայ, հսկայ քաղաքն էր երևում։—
Ծոյլ նաղանքով, իրիկնային արևի տակ անփոյթ փռուած՝
պսպղում էր քաղաքը հին հազարերանգ մի զանգրուած։

Հեռու, հեռու, անծայր ու լայն, տարածուել էր քաղաքը հին—
լողանում էր կարծես մարմանդ մշուշի մէջ իրիկնային։
Ցաղթ շէնքերը, բարձր ցցուած, կարծես կախուած կարմիր օդում
հեռադիտակ մթնում էին, անգունանում ու աղօտում։
Հեռու հրով միայն վառուած պատուհանները ապակի
փայլում էին արիւնամած վերջին հրին արեգակի.
արևի դէմ փայլում էին հրաբոսոր՝
բոլորկուել էր նրանց սրտում տագնապը սուր..
Ու երկնահուպ գմբէթների ոսկի խաչերը հրազոյն
հեռադիտակ մարում էին իրիկնային լուրթ երկընքում։
Եւ երկընքի սիրտը մխուած բևեռների պէս արնաքամ՝
փայլում էին արիւնամած ծխնելոյզներն հսկայական։
Ծուխ չէր ելնում նրանց փողից, չէին փնչում երկինքն ի վեր.
չէր կարծրանում նրանց ծուխից իրիկնային երկինքը էլ...
Լոկ մշուշը իրիկնային թանձրանում էր հեռադիտակ—
ու մշուշում կորչում էին ծխնելոյզները երկաթէ..

5.

Իսկ քաղաքից դէպի հարաւ՝ գուղձերի մօտ քանդած հողի՝
երևում էր հսկայական կայարանը երկաթուղու։
Լսում էր մերթ շոգեկառքի սուլոցը սուր հեռու մուժում—
մորթում էին կարծես այնտեղ խելագարուած մի անասուն...
Ճչում էր սուր, յուսակտուր, ու յուսահատ ձայնը նրա,
որպէս անդարձ մահի մի լուր տարածուում էր դաշտի վրայ։—
Ցցուած էր նա, կայարանը, հսկայ ու յաղթ, նրանց առաջ։—
Ու հանգոյցից կայարանի, դաշտովը մէկ լայնատարած՝
դէպի հիւսիս, դէպի հարաւ, ու արևմուտք, ու արևելք—
ուղիները երկաթագիծ ձգուել էին ամենուրէք։—
Երակների պէս երկաթէ քաղաքամօտ կայարանից

հեռու, հեռու ձգել էին ուղիները երկաթաղիծ։
Երակների պես երկաթէ՝ ամուր գրրկած կուրծքը հողի՝
սեղմըւեոլվ հետզհետէ փախչում էին գաղտագողի...
Ու ցցած էր ուղիների խաչակնքման սեղմ հանգոյցում —
կայարանը, որպէս մի հարց, որպէս հսկա մի քարացում։
Ուղիների ճամփամիջում հանգոյց էր նա կարծես կապած—
ու անդիջում կուում էին ամբոխները խելագարած։
Փչում էր մեղմ, մարմանդ մի հով՝ բարակ սուրում էրհարաւէն,—
գնում էին կուով, երգով, որ կայարանը գրաւեն...
Կուում էին։ Սուրում էր մի իրիկնային, մարմանդ քամի։
Դէմը՝ քաղաքն էր տարածւել՝ հազարամեայ մի թշնամի։
Սփինքսի պէս հսկայական, շէկ ծրծերը դրած հողին՝
նա կըարել էր արևակամ ամբոխների կարմիր ուղին...
Ու կայարանը՝ յաղթանդամ, իրիկնային կարմիր մուժում,
յաղթ նստել էր նրա առաջ, որպէս նրան հսկող մի շուն։—
Յաղթ նստել էր նրա առաջ ու տիրուհու կամքին դերի՝
երթն էր հսկում գետնատարած, երկաթաղիծո ուղիների։—
Ու քիչ մօտիկ կայարանին՝ խաչաձևած երկայնքն ուղու՝
դաշտի վրայ ձգւած կային երկայն շերտեր քանդած հողի։—
Թշնամին էր պահւել այնտեղ, ուր հողը թաց, խոնաւ էր դեռ՝
փորել էր նա դէմը, այնտեղ երկայնաձիգ խրամատներ։
Փորել էր ջերմ կուրծքը հողի, հողի սրտում դարան մտած՝
կրակում էր գաղտագողի, նենգ ձեռքերով արիւնոտած։
Փորել էր և իրա առաջ հող էր դարսել, ու ցեխ, ու քար—
բայց ո՞չ մի դիրք հողում փորած չի պաշտպանի մարդուն երկար...
Կուում էին՝—մօտենալով, մօտենալով հետզհետէ։
Պայթում էին զրընգալով հրանօթները երկաթէ...
Ե՛րգ էր կարծես կռիւը այդ, որ զնգում էր մայրամուտում.
նայես՝ թրռաւ մի հրանօթ ու թունդ պայթեց խրամատում...

7.

Կուում էին, ու կուելով անցնում էին նրանք առաջ։
Ու դաշտերում իրիկնային մահն էր քրքջում համատարած։
Երգում էր նա՝ երգը խառնած հրանօթի զրընգունին,—
անցնում էին նրանք առաջ ու կրակւած կուում էին։
Ե՛րգ էր սիրտը ամեն մէկի, երգ էր հայեացքը կրակոտ.
վառում էր սիրտը ամենքի, որպէս կարմիր մի առաւօտ։
Ե՛րգ էր կարծես արևը հին՝ իրիկնային լոյսով վառւած—
ու երգելով կուում էին ամբոխները խելագարւած...

8.

Եւ երգում էր մէկը՝ հզօր, հուժկու ձայնով ահեղագոչ,
գովքն էր երգում կռւի ելած, արիացած իր ընկերոջ...
Որպէս բազէ՝ երգը նրա սլանում էր հեռու, հեռու—
ու երգելով կրռւում էր նա՝ լուսաժպիտ ու ահարկու։
Երգում էր նա։ Մայր էր մտնում արևը հին՝ կարմիր քուրա։
Ու դաշտերում իրիկնային—զանգ էր կարծես ձայնը նրա։
Զանգ էր կարծես, զանգում էր զիլ, որ ողջ աշխարհը իմանա—
բորբ կարօտով անծայրածիր, կրակելով երգում էր նա։—

9.

«...Ստէպներից, անտառներից, քաղաքներից հեռու ու մօտ—
մենք մեր սիրտն ենք բերել նորից՝ յուսավառւած ու կրակոտ։
Այստեղ հիմա կռիւ է, մահ, ու աղջամուղջ է անորոշ,—

մենք մեր սիրան ենք պարզել հիմա՝ մահի հանդէպ կարմիր դրօշ։
Արիւնաքամ մայր է մանում ահա այստեղ արևը հին.
արիւնավառ ժպտում է մեզ այս աշխարհը իրիկնային...
Ու խնդասիրտ կուում ենք մենք, երգ ենք ասում կուում հիմի.
կուրծք է տուել աշխարհը ողջ՝ հազարամեայ մի թշնամի...
Բայց անվրհատ կուում ենք մենք, ու մահը,սէգ,ժպտում է մեզ —
շատերիս, ախ, պիտի զոհենք սրտերը մեր կարօտակէզ։—
Անողոք է երթը այս սէգ, որպէս կարմիր կարօտը մեր—
կրակեցէք, կրակեցէք, խելագարուած իմ ընկերներ...»

10.

...Մայր էր մանում իրիկնային արևը՝ թէժ լոյսով վառուած։
Ու անվրհատ կուում էին ամբոխները խելագարուած։
Աչքերի մէջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում—կարմիր կրակ՝
վերջին թափով մի ամբակուռ՝ անդայթ կուում էին նրանք։
Խենթ երգելով, կրակելով նրանք անցնում էին առաջ—
ու թշնամին փախուստ տուեց՝ ահաբեկուած ու վտարած։—
Մութ էր արդէն, մայր էր մտել արեգակի շողը վերջին,
երբ գրոհով մի անվեհեր կայարանը գրաւեցին...

11.

Մութ է հիմա։ Գիշերը, խոր, իջել է վար։
Մութ է հիմա, թանձր խաւար։
Երկաթուղու կայարանում, ուր ոչ մի լոյս չրկայ վառուած,
խռնուել են հազարանուն ամբոխները խելագարուած։—
Գիշերի մէջ չեն երևում յաղթ կամարները երկաթէ՝

լոյս չեն վառել կայարանում, որ թշնամին չընկատէ։
Սպասում են՝ աչքերն յառած խաւարամած հեռուներին՝
մութը իջաւ հաստատուած, մինչ կայարանը վերցրին։—
Սպասում են,որ մինչև լոյս գոնէ մի քիչ հանգստանան—
ու առաւօտ դուրս գան նորից և քաղաքի վրայ գնան։
Աչքերն յառած թանձր մութին, սրտատրոփ, անապաքէն՝
սպասում են առաւօտին, որ կռիւը շարունակեն։
Մի քիչ առաջ, արիւնաքամ, երբ դեռ դաշտում կուում էին —
ժամ էր թուում քաղաքն այնքան երկաթուղու կայարանին...
Եկան իրենք, կուով, երգով գրաւեցին կայանը մեծ—
իսկ թշնամին փախուստ տուեց ու քաղաքում պատսպարուեց։
Սպասում են իրենք հիմա, որ մինչև լոյս հանգստանան —
ու առաւօտ դուրս գան նորից և քաղաքի վրայ գնան...

13.

Ու մթի մէջ հազարամեայ, գիշերի մէջ խորը, անհուն՝
խառնուել են նրանք ահա երկաթուղու կայարանում,
Դաշտն է դէմը՝ խաւարակուռ ձգուած է նա։
Չրկայ մի ձայն, չրկայ քամի— մութ է հիմա։
Դաշտն է դէմը՝ անծիր, անծայր մի զանգուած խաւարամութ,
ուր նստել է անաչք, անլոյս, խորհրդաւոր կասկածը մութ։
Շնթռկել է, որպէս մի շուն, ու խաւարն է հսկում հիմի,—
շնթռկել է թանձր մուժում, որպէս անտես մի թշնամի։
Մութ նստել է կասկածը հին ու աչքերով խաւարամած
նայում է նա կայարանին, որ կանգնած է իրա դիմաց։
Շարժուում է մութը կարծես, ու խաւարով իր աչքերի—
նայում է նա լուրթ աչքերին խելագարուած ամբոխների...
Ու տագնապով անլռելի, հայեացքներով անթարթ լարուած,
նայում են մութ հեռուներին ամբոխները խելագարուած։

Լուրթ աչքերով խորը, տխուր—մութ են դիտում նրանք անհուն
ու դժժում է աղմուկը խուլ գիշերային կայարանում...

13.

Հոծ բանակով, հսկայական կայարանի դէմ խոնարհած՝
լուրթ աչքերով արևակամ—դաշտն են դիտում խաւարամած։
Մութ է դէմը, ու խաւարում, որ բացուել է որպէս անդունդ՝
երևում է հեռու—հեռուն կարմիր լոյսով վառուող մի գունդ։
Աչքերի դէմ մթակալած, հայեացքների դէմ ակընդէտ—
հեռու մթում լոյսն այդ վառուած գունտ է թուում, կարմիր մի կէտ։
Գիշերի մէջ—կարմիր, կարմիր, տագնապալից վառուում է նա՝
գիշերի մէջ վառել են, որ ամբողջ աշխարհը իմանա...
Անծայրածիր մթում հեռուի կարծես կարմիր գլուխ է շան—
վառել են այն, որպէս կուի ու տագնապի ազդանշան..
Քաղաքն է այն հազարամեայ, ուր տագնապ ու տենդ կայ հիմի։
Պահել է նա, որպէս վախից խելագարուած մի թշնամի։
Ու կրակը այդ կարմրակէզ, որ քիչ յետոյ պիտի մարի—
մի արնագոյն կէտ է կարծես ուղեղի մէջ խելագարի։
Բռընկուել է յոյսով յետին, հոգեվարքի տենդով վառուած—
ու նայում են կարմիր կէտին ամբոխները խելագարուած...

14.

Գիշերի դէմ խաւարամած, աչքերն յառած կարմիր կէտին՝
ամբոխները խելագարուած սպասում են առաւօտին։
Ու վառուում է խաւարակուռ հոգիներում նրանց անգայթ
կէտը այդ մուգ, որպէս հեռու, հրաբոսոր մի ճառագայթ։
Ծուր մխուել է նրանց սրտում, որպէս մի թէժ, կարմիր բևեռ—

թոյն է լցնում ու բորբոքում ու երազներ աշխարհաւեր...
Աղմկում է նրանց սրտում ժորմոքը հին, հազարամեայ
տենդ է սփռում ու խլրտում նրանց անգայթ սրտում հիմա։
Լուրթ աչքերում փայլում է վառ արիւնամած միացանկութիւն—
ու աչքերը միլիոնաւոր թոյն են թքում, արիւն ու թոյն։
Բարձրանում է նրանց սրտից տարիների մաղձը աղի—
ու վառուում է լուրթ աչքերում՝ արիւնալից ու կատաղի...
Ու աչքերը արիւնամած անդարձ յառած կարմիր կէտին՝
մութ տագնապով անդարձ վառուած՝ սպասում են առաւօտին...

15.

Գիշերի դէմ—գիշեր է մութ խաւարամած նրանց հոգին,
որ կարօտով մի կրակոտ սպասում է առաւօտին։
Խաւար է մեծ սիրտը նոցա, բայց խաւարում անծայրածիր—
Երկինքներ կան կապուտ աչեայ, հորիզոններ՝ անծայր, անծիր։
Ու աչքերում նրանց կապոյտ, ուր իջել է գիշերը մութ—
հազար բողբոջ կայ կրակոտ, ու արշալոյս, ու առաւօտ։
Նրանց ձրգուած մկաններում ուժն է նստել խոնաւ հողի—
Եթէ ուզեն՝ արևներին նոր տեմպ կըտան ու նոր ուղի...
Եթէ ուզեն՝ արեգակներ կըշպրտեն երկինքն ի վեր.
Եթէ ուզեն՝ վար կը բերեն երկինքներից արեգակներ...
Եթէ ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառուած—
Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարուած...

16.

Ու հոսում է գիշերը մութ, մօտենում է առաւօտին։
Հոսում է պաղ ու անօգուտ սպասումի ժամը յետին։

Դաշտից ահա սուրում է զով, մարմանդ քամին սառաստի-
ու վառում է վերջին լույսով կրակը այն կարմիր կէտի...
Նօսրանում է խաւարն ահա, գունատւում է հետզհետէ
խաւարը, որ դաշտի վրայ մի շղարշ է դառնում մութ է։
Օրօրւում է առաւօտի հովին տուած շղարշը այդ,
որ յուշ դարձած ցնդի պիտի, երբ բոլընկի մի ճառագայթ։
Ու սուրում է հեռուներից առաւօտւայ կիսամբթում—
մարմանդ, մարմանդ, բուրուռալից, գարնանային մի թարմու-
թիւն...

Շարժւում է խաւարը թէն ու հեռանում խաւարատած
երևում է քաղաքն արդէն՝ մութ, անորոշ մի զանգւած։
Ցաղթ շէնքերի պատերը յաղթ որոշւում են հետզհետէ,
երևում են ահա հպարտ ծխնելոյզները երկաթէ...

Ու բորբ սրտում ամբոխների թունդ է առնում կարօտը մառ,
երկինքներում լուրթ աչքերի վառւում է տենդը հոգեվար...
Բոլոր աչքերով նայում են մեծ, խաւարակուռ զանգւածին
ու վառւում է սիրտը նրանց, որպէս հրդեհ արեգնածին...
—Պիտի երթան առաջ հիմա, պիտի առնեն քաղաքը մեծ,
պիտի թափեն նրա վրայ հազարամեայ մաղձը իրենց...
Քանդեն պիտի ու աւիրեն, տեղը փոշի պիտի փռեն—
հազարամեայ քաղաքը այդ քանդեն պիտն ու աւերեն...
Այրեն պիտի, խելագարւած պիտի պարեն հրդեհներում,
ու կարմրավառ կրակ ու կայծ պիտի փռեն երկրի հեռուն...
Ու ճնացած մոխիրը ձիգ պիտի այրեն նրանք նորից,
որ կեանքը հին, որպէս փիւնիկ, չբեռարձրանա մոխիրներից...
Քամուն տալով մոխիրը այն, որ տանի ու յետ չբերի—
դէպի հեռուն պիտի երթան դեռ չծնւած արևների...

17.

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան

կարմիր վառւեց արևը հուր, որպէս կուի ազդանշան,—
երբ բոլընկւեց արևելքում արևը՝ նոր լոյսով վառւած—
դուրս նետւեցին կայարանից ամբոխները խելագարւած...
Դէմը դաշտն էր անծայրածիր, ուր մշուշ էր արևագոյն,
ու մշուշում շոգիացող, առաւօտի մարմանդ միգում,
կրկէսի պէս մի վիթխարի, խայտաբղէտ, խայտանկար
եզերքի մօտ ճանապարհի երևում էր քաղաքը քար...
Աչքերն յառած հեռու-հեռուն կարմիր վառւող արգակին՝
արևավառ հեռուներում նրանք կուում էին կրկին—
հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառւած՝
դէպի Արևն էին գնում ամբոխները խելագարւած...

. . . . . .

.. . .

Յունիս. 918 թ.

ZUUR-Հայ.ՍՍՀ

ԾԱԽԻՈՒՄ Է ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

«Ծիածանը» Լիրիկա—Մոսկվա, 917 թ. գինը 1 ր. 50 կ.
«Սօմա» Նոր վեդեան պոէմ—Թիֆլիս, 919 թ. գինը 3 ր.

Թիֆլիս, տպարան «ՊՐՕԳՐԷՍ» Լ. Պողոսեան 919 թ.

ԳԻՆՆ Է 2 Ր.

«Ազգային գրադարան»
NL0362003

48861